ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներ՝

Լ. Ադամյանի (լիազորագիր, տրված՝ 03.03.2020թ.)

Վ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 03.03.2020թ.)

«Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Կ. Ասատուրյանի (լիազորագիր, տրված՝ 15.01.2020թ.)

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ս. Շահնազարյանի (լիազորագիր, տրված՝ 03.02.2020թ.)

քննելով ՀՀ վիճակագրական կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից 28.02.2020թ. ներկայացված (28.02.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/22 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Յուքոմ» ՓԲ ընկերության կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Յուքոմ» ՓԲ ընկերությունը (հետայսու նաև՝ Ընկերություն) 28.02.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) հրավերի համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել համակարգչային պլանշետների գնումը, որն իրականացվել է մեկ փուլով՝ 11.12.2019թ. հրապարակվելով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հայտերի բացվել են՝ 06.02.2020թ. ժամը 17:30-ին (ծրագրային խնդրի պատճառով բացվել է 06.02.2020թ. ժ. 18:10-ին), մասնակցությամբ՝ «Յուքոմ» ՓԲ, «Վեգա Ուորլդ» և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությունների:

Պատվիրատուի կողմից գնման ընթացակարգն իրականացվել է երեք նիստով՝ 06.02.2020թ., 11.02.2020թ. և 17.02.2020թ.: 11.02.2020թ. կայացած նիստի ընթացքում Մրցույթի գնահատող հանձնաժողովի (հետայսու նաև՝ Հանձնաժողով) կողմից ներկայացվել են մասնակիցների առաջարկած գները, որից հետո որոշվել է կասեցնել նիստը և կազմակերպել միաժամանակյա բանակցություններ՝ մասնակիցների կողմից Հավելված 2-ով (գնային առաջարկ) ներկայացված գների նվազեցման նպատակով: Բանակցությունները նշանակվել են 2020թ.-ի փետրվարի 17-ին, ժամը 15:00-ին:

Նշված օրը Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչները ներկայացել են նիստին հինգ րոպե ուշացումով, որի մասին նախապես հեռախոսազանգով տեղեկացրել են նաև Հանձնաժողովին (Հանձնաժողովից կողմից տեղեկացվել են, որ կսպասեն ներկայացուցիչներին):

17.02.2020թ. ժամը 15:05-ին Ընկերության ներկայացուցչները, ներկայանալով նիստին, տեղեկացել են, որ նիստն արդեն ավարտված է և Ընկերությունը չի կարող մասնակցել բանակցություններին, իսկ որպես ընտրված մասնակից է ճանաչվել բանակցություններին ներկայացած միակ մասնակից «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն (մինչդեռ՝ վերջինիս որևէ ներկայացուցիչ ժամը 15:10-ին ներկա չէր ՀՀ ՎԿ-ի նիստերի դահլիճում):

Բացի այդ արդեն ժամը 15:10-ին Ընկերության ներկայացուցիչներին է տրամադրվել ստորագրված նիստի արձանագրությունը, որի ուսումնասիրությունից պարզվել է, որ բանակցությունների տևողությունը սահմանվել է 10 րոպե:

Ընկերությունը նշել է նաև, որ «Յուքոմ» ՓԲ ընկերության գնային առաջարկը, որը պետք է ներկայացվեր բանակցությունների շրջանակներում ավելի ցածր էր, քան ընտրված մասնակից «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից տրված գնառաջարկը:

Միևնույն ժամանակ հայտնել է, որ ժամը 15:10-ին արդեն առկա է եղել Հանձնաժողովի կողմից ստորագրված նիստի արձանագրությունը, իսկ մասնակցի ներկայացուցիչը դահլիճում չի եղել, այն պայմաններում, երբ բանակցությունների համար սահմանվել էր 10 րոպե ժամանակահատված: «ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով հրավերի 1-ին մասի 7.7. կետի «դ» կետի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, իսկ «ե» կետի համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» «բ», «դ» և «ե» կետերը, Մրցույթի հրավերի 7.7 կետը:

Տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից բանակցությունների մասով նիստն իրականացվել է օրենսդրական պահանջների խախտմամբ, որով ըստ էության խախտվել են Օրենքով սահմանված հիմնարար սկզբունքները, ինչի արդյունքում սահմանափակվել են Ընկերության իրավունքները և հանգեցրել մասնակիցների միջև մրցակցության խաթարմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Հանձնաժողովին ՝ չկայացած հայտարարել «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում 2020թ. փետրվարի 17-ի նիստին կայացրած որոշումը՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ գնման պայմանագիր կնքելու մասին և ընդունել համապատասխան որոշում՝ գների

նվազեցման բանակցությունների համար նիստի նոր օրվա և ժամի մասին, որին կարող են մասնակցել բավարար գնահատված մյուս մասնակիցները ևս:

«Յուքոմ» ՓԲ ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ վիճակագրական կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը.

ՀՀ վիճակագրական կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով կազմակերպել և անցկացրել է «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերը պետք է բացվեին www.armeps.am համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով 2020 թվականին փետրվարի 06-ին՝ ժամը 17:30-ին, սակայն Համակարգի ծրագրային խնդրի հետևանքով բացվել են 2020 թվականի փետրվարի 06-ին՝ ժամը 18:10-ին: Հայտեր են ներկայացված եղել «Յուքոմ» ՓԲ, «Վեգա Ուորլդ» և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությունների կողմից:

Պատվիրատուն հայտնել է, որ գնման ընթացակարգը կազմակերպված է եղել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, և 11.02.2020թ. Հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված ներկայացրած բոլոր մասնակիցներին Համակարգի միջոցով ծանուցել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, այն է՝ 2020 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 15:00-ին, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ, 613 աշխատասենյակ:

Համաձայն Պատվիրատուի դիրքորոշման՝ բանակցությունների համար սահմանված ժամին՝ 15:00-ին, ներկայացել է միայն «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը: Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության՝ բանակցությունների համար սահմանվել է 10 րոպե տևողություն: Բանակցությունների արդյունքում «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ՝ 215900800 ՀՀ

դրամի չափով (ներառյալ ԱԱՀ-ն): Նիստի վերաբերյալ կազմվել է գնահատող Հանձնաժողովի արձանագրություն, որը բանակցությունների վերջնաժամկետը լրանալուն պես ստորագրել է նաև «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության լիազորված ներկայացուցիչը:

Ներկայացված հայտերի հիման վրա «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի գնահատող Հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին չափաբաժնի մասով «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերությանը ընտրված , «Յուքոմ» ՓԲ ընկերությանը 2-րդ տեղ զբաղեցրած, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությանը 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են ներկայացված դիրքորոշումը:

<u>3. «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից 03.03.2020թ. բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին ներկայացրել է միջնորդություն ԳԲՔԱ-ՆԳ-2020/22 բողոքով երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ բողոքով բերվել է անհիմն փաստարկներ, մասնավորապես՝ ժամը 15:05 «Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների այնտեղ գտնվելու մասով, արդեն իսկ համաձայն գործում առկա ապացուցների՝ վերջիններիս համար անցագիրը ձևակերպվել է ժամը 15:10-ին և ընդգծել է, որ սա բանակցությունների նիստի վարման մասնակցելու ժամը չէ:

Միաժամանակ հայտնել է, որ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցչի հետ խոսել է և վերջինս հստակ նշել է, որ բանակցությունների համար սահմանված 10 րոպեն սպասել են, ժամկետն ավարտվել է և ներկայացուցիչը ստորագրել և դուրս է եկել: Ինչպես նաև նշել է այն մասին, որ անհիմն է այն պնդումը, թե «Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները մինչև ժամը 15:05 կամ մինչև ժամը 15:10 այնտեղ են եղել, նման բան չի եղել:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ:

2. Մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «Յուքոմ» ՓԲ, «Վեգա Ուորլդ» և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությունները:

3. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման նիստը նշանակվել է 2020 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 15:00-ին:

4. Համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենքի անցակետի մուտքերի վերաբերյալ տեղեկանքի՝ «Յուքոմ» ՓԲ ընկերության ներկայացուցիչները ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենք մուտք են գործել առնվազն ժամը 15:10-ին, մասնավորապես՝ 15:10-ին ֆիքսվել է Ընկերության ներկայացուցիչների մուտքը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Յուքոմ» ՓԲ ընկերության կողմից 28.02.2020թ. ներկայացված բողոքը, «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

Այսպիսով՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ:

Մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «Յուքոմ» ՓԲ, «Վեգա Ուորլդ» և «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությունները:

Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման նիստը նշանակվել է 2020 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 15:00-ին:

Համաձայն «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 4 արձանագրության՝ բանակցություններին ներկայացել է «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության լիազորված ներկայացուցիչը:

Բանակցությունների համար սահմանվել է 10 րոպե տևողություն: Բանակցությունների արդյունքում «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ՝ 215900800 ՀՀ դրամի չափով (ներառյալ ԱԱՀ-ն):

Ներկայացված հայտերի հիման վրա «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին չափաբաժնի մասով «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերությանը ընտրված, «Յուքոմ» ՓԲ ընկերությանը 2-րդ տեղ զբաղեցրած, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությանը 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

Ընկերության ներկայացուցիչը բողոքի քննության նպատակով 03.03.2020թ. հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ ժամը՝ ***15:02 Հանձնաժողովի նախագահը զանգահարել է Ընկերության ներկայացուցչին և տեղեկացել այն մասին, որ ներկայացուցիչները 5 րոպե կուշանան:***

Նիստի ընթացքում Հանձնաժողովի կողմից զանգելու փաստը չհերքվեց նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցչի՝ Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Ի հավաստումն վերը շարադրվածի «Յուքոմ» ՓԲ ընկերության կողմից ներկայացվել է «Յուքոմ» ՓԲԸ-ի աշխատակից Դավիթ Եփրեմյանի մուտքային զանգերի մանրամասն հաշվետվության սկանավորված տարբերակը, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից առկա է 17 վարկյան տևողությամբ մուտքային զանգ ժամը՝ 15:02-ին:

Ինչպես նաև_համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենքի անցակետի մուտքերի վերաբերյալ տեղեկանքի՝ «Յուքոմ» ՓԲ ընկերության ներկայացուցիչները ***ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենք մուտք են գործել առնվազն ժամը 15:10-ին, մասնավորապես՝ 15:10-ին ֆիքսվել է Ընկերության ներկայացուցիչների մուտքը:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 4 արձանագրությունը, Պատվիրատուի կողմից ներկայացված ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենքի անցակետի մուտքերի վերաբերյալ տեղեկանքը, «Յուքոմ» ՓԲԸ-ի աշխատակից Դավիթ Եփրեմյանի մուտքային զանգերի մանրամասն հաշվետվության սկանավորված տարբերակը և լսելով կողմերին, գտնում եմ, որ ***Հանձնաժողովի նախագահը հաշվի առնելով ժամը 15:02-ին, հեռախոսազանգի միջոցով Ընկերության ներկայացուցիչների 5 րոպե անց ներկայանալու մասին տեղեկանալու և վերջիններիս առնվազն ժամը 15:10-ին ՀՀ վիճակագրական կոմիտեի վարչական շենք մուտք գործելու հանգամանքը, կարող էր***

<u>Ընթացակարգի մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման ապահովման նկատառումներից ելնելով հնարավորություն ընձեռնել Ընկերության ներկայացուցիչներին մասնակցելու նիստին:</u>

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Յուքոմ» ՓԲ ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Յուքոմ» ՓԲ ընկերության կողմից 28.02.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀ ՎԿ-ԲՄԱՊՁԲ-2020/1» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. Ընդունել որոշում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նոր նիստի օրվա և ժամի մասին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**